

դէացին՝ ինչպէս նաև Մանեթոն եգիպտացին իրարու ժամանակակից Քրիստոսէ 300 տարի առաջ, ուղելով բարձրացրնել և միանդասմայն հինաւուրց ցուցընել իրենց ազդին ծագումը և ըսկիզբը, սկսան անհաւատալի և բոլորովին անտեղի դէպքերը ու տարիներ հինարել որով և ճշմարիտ պատմութիւնը տակին ու վրայ ըրին իրենց առասպելաբան ստութեամբք : Քաղդէացիք մողերնին դրեր էին որ իրենց սկիզբը եզիպտացուցմէ և ուրիշ ամեն ազգերէ աւելի հին ըլլայ, և ըստ ոմանց կը կարծէին թէ հարիւր յիսուն հազար տարուան պատմութիւն ունենան, կամ ըստ այլոց՝ չրս հարիւր եօթանասուն և երեք հազար տարուան, իրենց աստղաբաշխական զննութենէն սկսեալ մինչև մեծին Աղեքսանդրի օրերը . իրաւոնէ անհեթեթ և անտեղի պահանջմունք որուն նոյն իսկ պատասխանելը յիմարութիւն կը սեպուի թող թէ հաւատքը ընծայել:

## ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԿՈՑ

Այս դարուս հրաշալի դեպքերէն մէկը կրնայ համարուիլ վենետիկեան գաւառին Աւտորիացւոյն ձեռքէն ազատումը, որ մօտ օրերս և մեր աշքին առջև պատահեցաւ: Գկայ պատմութեանց էջերուն մէջ տեղ մը ուր կարդամք, թէ ազդ մը ծովու և ցամաքի վերայ թշնամիէն յաղթուելով, ինչպէս որ եղաւ իտալացւոց Քուամոզա և Լիցցա պատերազմներուն մէջ, հարկադրէ զթշնամին իր սահմաններէն դուրս ելնել, և փոխանակ ծանր և նախատալից դաշնագրութեան, ստիպէ զթշնամին յարդար պահանջանս : Եղածը եթէ փիխառփարար քննեմք, աստուածային տեսչութեան գործ կը համարիմք քան թէ մարդկային . զի առանց կաթիլ մի արեան հեղոյ, այն քառակողմեան հըշչակաւոր բերդերը, որք են Մանթուա,

վերոնա, Փէսքիէրա և Լէնյակո, և հինգերորդը վենետիկի, անոնց թագումին, զորս յիսուն տարիէ հետէ Աւտորիայ տէրութիւնը կ'ամբացունէր, և իրաւամբանառիկ կոչուած էին 'ի հին ժամանակէ մինչև ցայժմ, ահա այս անառիկ կոչուած բերդերը առնուեցան առանց հրացան մը պարզուելու : Պարապը գնաց Աւտորիացւոյն այսչափ տարիներէ հետէ ըրած անհուն ծախքը և պատրաստութիւնը : Այն բերդերը որ իտալիոյ գրունք էին, փակեցան Աւտորիոյ դէմ, և ելաւ Աւտորիացին իտալական երկրէն, Սիկիլիայէն սկսեալ մինչև յԱլպեան լերինս, ուր կ'իշխէր 1300 տարիէ հետէ կամ ազգեցութեամբ կամ զօրութեամբ . բարձաւ հիմա բոլորովին թէ իր զօրութիւնը և թէ իր ազգեցութիւնը իտալական երկրէն : իտալիան երբէք այսպէս միացեալ և ողջանդամ եղած չէր, բայց եթէ հին Հռոմայեցւոց ժամանակ :

Արդ գննեմք հիմա թէ ինչ է այս յեղախութեանց պատճառ : Յիրաւի իտալիան պարտական է այս անգամ իր ազատութեան համար Բրուսիոյ տէրութեան, ինչպէս 58ին Գաղղիոյ տէրութեան, բայց ոչ գաղղիական աննընկուն գունդերը, և ոչ Բրուսիոյ յաղթական բանակը ազատարար եղան իտալիոյ, այլ միջնորդ կամ ձեռընտու ազատութեան երկու գլխաւոր պատճառներ կը դիմեմ . մին Աւտորիոյ ծանր հարկահանութիւնները և չափազանց խատութիւնները, երկրորդ՝ իտալիոյ քաղաքականութեանը, ազգայնութեան ողին և միութեան սէրը : Առաջնով այնչափ ատելի եղած էր Աւտորիացին իտալացւոց, որ Աւտորիացւոյ երես անգամ նայիլ չէին ուզեր, կ'ատէին զնա իրբե իրենց անհաշտ թշնամին, և կը փափագէին ազատիլ անոր հարկաւորեալ խիստ կառավարութենէն : Ուստի երբեմն երբեմն ջանացին լընկէց ըլլալ, և մանաւանդ մեր օրերը 48ին, բայց չյաղողեցան . վասն զի իրենց կողմանէ կը պակասէր երկրորդ պայմանը : Հրաշիւք իմն 48ին

ալ ազատեցաւ վենետիկ քաղաքը ի-  
րեն շրջակայ սահմաններով, բայց յայն-  
ժամ կը պակասէր իտալիոյ քաղաքա-  
կրթութիւնը, ազգայնութեան ողին և  
միութեան սէրը, մանաւանդ վերջինը .  
վասն զի ամեն քաղաք ամեն գեղ ինք-  
նազլուխ ուզեցին ըլլալ, և չյիշեցին  
կամ չուզեցին յիշել թէ ՚ի միուրեան  
է զօրութիւն, ուստի և տկարացան . և  
թէպէտ տարածամ օգնութիւն ուզե-  
ցին իրենց նեղութեան ժամանակ Գաղ-  
ղիայէն, բայց չընդունեցան, և թշնա-  
մին զօրանալով եկաւ տիրեց բովան-  
դակ կորուսեալ երկրին: Եւ իտալա-  
ցոյ բերանը մնաց իտալիան ինքի-  
րեն պիտի գործէ խօսքը, և ոչ ոք ցա-  
ւեցաւ իտալիոյ վիճակին վերայ, վասն  
զի իրեն կործանման պատճառ ինքն ե-  
ղաւ :

Անցան 48էն մինչև հիմա տասնութ-  
տարի, փոխեցան իտալիոյ բարքը, յա-  
ռաջացան քաղաքականութեան մէջ,  
արծարծեցաւ ազգայնութեան ողին և  
միութեան սէրը. ծանօթացան Եւրո-  
պացի թագաւորութեանց և տէրութեց,  
սիրեցին և սիրեցան անոնցմէ. հասաւ  
այն վայրկեանը որ ամեն արդարախոհ  
թագաւորք և ժողովուրդք սկսան փա-  
փառել իտալիոյ ազատութեանը: Ա-  
ռաջարկեցան քանի մի անգամ Աւրո-  
տրիոյ տէրութեան վենետիկեան գաւա-  
ռը թողոյ համար զանազան պայման-  
ներ, իրեն օգտակար, իտալիոյ համար  
ծանր. բայց չընդունեց Աւտրիացին.  
որ եթէ ընդունած ըլլար, թերևս հիմա  
իր կործանումը չէր տեսներ Պրուշի  
ձեռքէն, դարձուներով բոլոր իր զօրու-  
թիւնը Պրուշի դէմ, և ոչ թէ երկու բաժ-  
ներով:

Տէրութիւն մը ատելի կ'ըլլայ ըսկինք  
ժողովրդեան, իր ծանր հարկահանու-  
թեամբ և սաստիկ խստութեամբ, այս  
ոչ միայն ստոյգ է օտար տէրութեան  
համար, ինչպէս էր Աւտրիացին իտա-  
լիոյ նկատմամբ, այլ և ստոյգ է բնիկ  
տերանց համար: Ցեսանք մեր օրերը  
Նարոլիի թագաւորութեան, թուքա-  
նայի, Մոտենայի, Բարմայի դքսութեց

անկումը, և Սավոյայի գահին ամբառ-  
նալը: Ասոնց անկման պատճառ ոչ ե-  
թէ կարիպալտիին փոքրիկ ջոկատը ե-  
ղաւ, այլ իրենց տերանց անհաճոյ խիստ  
կառավարութիւնը, և ոմանց Աւրո-  
տրիացոյն հետ ունեցած յարաբերու-  
թիւնը և կուսակցութիւնը: Իսկ Սա-  
վոյային դարուս քաղաքակրթութեան  
յարմար ընթացք մը բաննեցունելով սի-  
րելի եղաւ ժողովրդեան . և մինչդեռ  
կ'իշխէր չորսուկէս միլիոն ժողովրդեան  
վերայ, սկսաւ իշխել քսան և չորս մի-  
լիոն ժողովրդեան վերայ: Իտալիոյ մի  
ծայրէն մինչև միւս ծայր կը հնչէ միայն  
Վիկտոր ԼՄՊԱՆՈՒԽիլի անունը: Ահա  
այսպէս ազդի մը պառակտեալ և հեր-  
ձեալանդամները միացան իրարու հետ,  
մի սիրտ մի հոգի եղան . ոլ չկրնար  
մեծամեծ ակնկալութիւններ չունենալ  
այսպիսի ազդէ մը: Ազգ մը որ ամեն  
բանի կարող, ազդ մը որ մեծամեծ հան-  
ճարներ երևան հանածէ, ազդ մը որ գե-  
ղարուեստից օրէնսդիր եղածէ, և շատ  
տարիներէ հետէ չունենալով այն խրա-  
խուսիչ բազուկները, շատ բանի մէջ  
ետև մնացած էր, ծաղկեալ Եւրոպացի  
ազգաց հետ բազգատելով: Բայց յու-  
սամք թէ այս միութիւնը, և այս եռան-  
դրն յառաջդիմութեան, նոր ասպա-  
րէզ բանայ իտալացոյ սրամիտ ազ-  
գին առջև, և նորէն կենդանանան ծան-  
դէ, ֆէրրարդա, Գալիլէոս, Վոլթա,  
Դիցիանոս և Ռաֆայէլ, և ուրիշ ասոնց  
նմանները:

Վերջ տալով խօսքերնուս կ'ըսեմք  
թէ, Տէրութեան մը գահը հաստատող  
տարերն են արդարախոհութիւն և ա-  
զատութիւն խոհական: Խոհական կը-  
սեմք՝ վասն զի կայ անսանձ ազատութի-  
մ'ալ զոր անկարգութիւն կամ խառ-  
նակութիւն մանաւանդ կոչելու է, որ ՚ի  
հակառակէն կը կործանէ գահերը կը  
կործանէ և վեր՚ի վար կ'ընէ բարոյական  
և Փիզիգական աշխարհքն ալ: Գերութե-  
մէջ եղաղ ազգի մը ազատութեց տարերն  
են քաղաքակրթութիւն, ազգայնութե-  
ողի և միութեն սէր: Այն տէրութիւնը  
որ աւելի ազատական է, իր ժողովուր-

Դը աւելի զարգացեալ է և բարեկեցիկ, և խոռվարար մտածութիւններէ հեռի: Այս ազգը որ տղէտ և անկիրթ է, կամ թէ ըսել՝ չունի քաղաքականութիւն, չկրնար ունենալ ազգայնութեան ողի: ունենալով քաղաքականութիւն և ազգայնութեան ողի, եթէ չունի սէր միութեան, միտ տկար է, և չկրնար դործմը 'ի գլուխ հանել:

Այս ամեն խորհրդածութեանց պատճառ տուալ մեզի հոկտեմբերի 19ին եղած յեղափոխութիւնը, որ վենետիկյա տարեգրաց մէջ նշանաւոր օր մի պիտի համարուի: Այն օրը մինչ ոսկեփայլ արեգական շառավիժները հորիզոնէն վեր կը բարձրանային, և կը տարածուէին երկնքին գեղեցիկ կապոյտ դաշտին մէջ, ուր և ոչ փոքրիկ ամպ մը կ'երևէր, ահա վենետիկյ մի պարանոցէն կ'ենէին գուրս Աւստրիոյ մնացորդ դորքերը, և միւս պարանոցէն կը մտնէին իտալական նաև զանազան ազգային դրօշներով զարդարուած: Կրնայ մարդ մակաբերել, թէ ինչ տարապայման ցնծութիւն զգեցաւ ժողովուրդը, յիսուն տարուան լրւծը վրայէն թօթափելով, զոր կ'աւետէին իրեն թնդանօթից և զանդակաց հնչիւնք: Երբ պարզեցան սուրբ Մարկոսի հրապարակին մէջ իտալական դրօշները, կեցցէ ձայներով երկինք և երկիր կը թնդայը, զոր կը հնչէին վիկտոր կմմանուէլի, իտա-

լիոյ միութեան և կարիպալտիկն համար: Շատ տարիներէ հետէ չէր տեսած սրբոյն Մարկոսի հրապարակը այս չափ բազմութիւն: և չէր եղած հանգիւատեսն այսպիսի համաշխարհական ցընծութեան: Ոմանք ուրախութեան հետ արտասուր ալ կը խառնէին, մանաւանդ ծերերը, յիշելով իրենց հասարակապետութեան տէրութիւնը, գոր 1799ին կորուսին մեծին նարուէնի ժամանակ: Բայց հիմա մոռանալով իրենց մամնաւոր օգուտը, հասարակաց օգուտը կը մտածեն: Կ'ուզեն ամենքը միաբան իտալիոյ միւս մասին հետ միանալ, վիկտոր կմմանուէլի կառավարութեան տակ:

Մնկարելի է բերանով պատմել և գրով ստորագրել ինչ որ կ'զգար ժողովուրդը իր սրտին մէջ: Այն օրուան անպատմելի ցնծութիւնը նա միայն կ'ըզգայ, որ գիտէ և կը ճանաչէ ազգի մը աղատութեան յարգը: Բոլոր քաղաքը ուղիւ վերայ էր, տուները և հրապարակները զարդարուած դրօշներով և դիպակներով, ամենուն աշբը եկող զօրաց վերայ, ականջը երածտական քաղցը նուազաց: ամենուն բերանը իտալական աղատութեան եռանդուն երգեր, որոց մին կը գնեզք հոս իբր ՚ի ճաշակ, և մնացած հանդիսից մանր ստորագրութիւնը կը թողումք լրագրաց:

Հ. Մ. Ք.

### ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Արարեալ ի փաստաքանէն Անձելո Պրոֆեկրիո, և յարմարեալ յեղանակ երաժշտէն Պրիձձի վասն զօրաց և ազգային պահանորդաց.

Ի շողողիւն սուսերաց  
Զարթեան գահք եւ ժողովուրդք.  
իտալացիք ի մարտ, մարտ,  
Զայն մայրենի կոչէ զձեզ:

Թնդանօթից ի բոմբիւն  
Ելէք սլասցուր ի վաշտ վաշտ,